


րակ նետելու և միջակ գինով ծողովոդին հրացնելու միջոցներ ձեռք շառնուին և ուեւ արտաքին օդնութիւնը շհասնին Մշեցին, կը հաւաստեմ ազնիւ ընթերցողին որ իրը ու թաւղթերու գպիր, ամեն շաբթու սովամահներու թիւը պիտի ներկայացնեմ Պատ. մանզումին:

* * * Առաջնորդարանը թափուր վիճակ մը ունի. Հետեւաբար Խարտիսանեան Ս. Հօր ներկայութիւնը անհրաժեշտ կը նկատուի: Խարախանեանը սպասեցնելու պէտք չկայ. պէտք է անմիջապէս ճամբու հանել՝ եթէ կեդր. Վարչութիւնը չուզեր որ Մշեցին նեզուի առաջնորդի բացակայութենէն:

ՄԻՔԵԼ. ՇԱԽՈՐԾ

Մաս, 8 Հոկտ. 1908 թ.



ՀԱՅԱԲՆԱԿԻ ԳԱԼԻՒԹԻՆԵՐՈՒՆ ԽԵՂՋՈՒԹԻՒՆԸ

Տեղապահ Մրբազան Հօր Տնօրինութեամբ նետեւեալ նամակը դրկուած է վանառական դասուն:

Մուշ, Վան, Բաղէշ, Խնուս և Սասուն սովոր տիրած է և նոյն տեղերու Հայ բնակիչներ ընտանեօք ոչ միայն հացե կարօտը կ'քաշեն, այլ և բուռուլին մերկ ըլլալուկ՝ վերահաս ձմբան իրենց կեանքին սպառնացող մահուան վտանգներուն հանգէալ այժմէն իսկ սահմանակած են, հաց և հագուստ կ'հայցեն:

Խրանց ացս ամենասոսկալի վիճակին մէջ Ազգ. Պատրիարքարանը կ'հարկագըռուի հաց և հագուստ ճարելու համար բարեկութ ազգայնոց գիմել:

Արդ՝ յանուն յիշեալ գաւառացի ամենախղճալի ազգայնոց կ'իննդրուի Զեր ազնուութենէն որ բարեհաճի խզճովին ճերմակեղինաց համար բըդեղէն կերպաս զըկել ի Պատրիարքարան, որպէս զի կարել արուելով փութացուի յիշեալ տեղերը:

Ողջունիւ սիրոյ, սրտագին օրհնութեամբ և անկեղծ յարգանոք:

Մնամք Ազօթարար Պատրիարքական ՏԵՂԱՊԱՆ
ԴԵՒՑՆԴ Վ.Ա.ԲԴ. ԴՈՒՐԵԱՆ

Մոյ Առաքելոց վանքի վանահայր Մուրատեան վ.թղ. • Պատրիարքարան դիմելով, կ'ըսէ թէ նոյն վանքն որ անցեալ օրերու մէջ այնքան բռնութիւններու ենթարկուեցաւ, այսօր նորոգութեան զգալի պէտք մը կ'ներկայացնէ և ձեռնարկուած է կոմարն ու մէկ քանի ժառիրը ձմրան խստութիւններէն պաշտպանելու: Այս վանքը նշանաւոր պատմական վանքերէն մէկն է: Հոն թաղուած են Մովսէս Քերթողահայր, Դաւիթ Անյաղմ, Ամառէ Վերծանող, Ստեփան Ասողիկ: Կառավարութիւնը կ'առարկէ միշտ թէ վանքին մէջ յղափոխականներ պահած են, հետեւաբար սոէկալ խուզարկութեանց և ճնշումներու առարկայ կ'ըլլար վանքը:

— Երդնկայի Առաջնորդը կ'առեղեկացնէ Պատրիարքարան թէ սովոր ահռելի համեմատութիւններ առած է: սովեալներ սրտակեղեք աեսարան մը կ'պարզեն: Խուրանայի, Կէրծէնիսի և Կամալսի գիւղելին աղեխարշ նամակներ կ'առեղան: Ամէն կողմէ Անօրի ենք, սովաման կ'կորսուինք կաղաղակեն:

— Տեղապահ Սրբազնութ, կիլիկիոյ Ա. Կոթողիկոսին հեռագերն ստանալուն պէս իսկոյն ազգու բագրիր մ'ուղղելով Մեծնալարքուն յայտնած էր թէ ջարդի վախ կ'տիրէ Սոյ մէջ և Թուրք խուժան մը և կեափուրները կոտորելու սպառնալիքով ճամբայ ելած է: Մեծ-Եպալքոսն որ այս թագրիրը ստացած պահուն գեսալաններու հետ կ'առանակցէ, խնդրոյն կարեսրութիւնն զդալով, իսկոյն մեօնիւրացին միջոցաւ կ'հազորդէ Պատրիարքարանի պաշտօնեային թէ «Տեղապահ Սրբազնութ թող վստահ ըլլայ, հիմակ իսկ Ատանայի կուսակալութեան պիտի հեռագրութիւն Տեղապահը կրնայ վստահ ըլլալ հանրային ապահովութեան վրայ:» Թուրեան Սրբազնան անմիջապէս հեռագրաւծանոց Ս. Կաթողիկոսին թէ մոլեւանդ խուժանը պիտի շյաջողի իր չար խորհուրդին մէջ և թէ Մեծ-Եպալքոսին տուած ապահովութիւնը կատարեալ է:

— Տեղապահ Սրբազնանն երէկ հայո. Պալատ երթալով շնորհաւորեց Պայրամի տօնք. յետոյ շնորհաւորական այցելութիւն տուաւ նախարարական մարմնոյն և պետական աւագանիին:

— Տեղապահ Սրբազնանն որ երէկ Մեծ-Եպարքոսին շնորհաւորութեան գացուծ էր, զիտել տուաւ մայրաքաղաքիո և գաւառներու մէջ լըջած ջարդի վախը, որով ժողովուրդն ահու-

սարսափի մասնուած է: Մեծ—Եպարքոսն ազահովցուց Տեղապահը թէ այդ ըսլոր լուրերը լոկ ժողովրդական տարածայնութիւններ են, թէ պէտք է ապահով ըլլայ ժողովութզը:

—Տիաբաէքիրի առաջնորդ Տ. Գէորգ Ռ. Վ. Երբանոսեան Աներեկի Հրկիզեալներուն համար անմիջական նպաստ մը խընդուած էր նպաստից յանձնաժողովէն, Պատրիարքարանէն զրուեցաւ թէ նպաստից Սնտուկը կը կարող չէ, և զիմում ըրաւ Ներքին գործոց նախարարութեան պետական օգնութիւն մը խընդուելով:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Տեղապահ Արքազանը, նախընթաց երեկոյ հեռաղիքներ ուղղեց Ա. Էջմիածին, Կիլիկիոյ Ա. Կաթողիկոսին և Երևուաղէմի Ա. Պատրիարքին, ինչպէս նաև գուշառական Առաջնորդներու, հազորդելով Ամեն, Եղմիրեան Արքազանի միաձայն ընտրութիւնն ի Պատրիարքութիւն Թուրքիոյ:

Երէկ Կիլիկիոյ Ա. Կաթուղիկոսէն, Տ. Յարութիւն Ա. Պատրիարքէն, բաւական թուով Առաջնորդներէ և մօտակայ տեղեւրու ազգայիններէ շնորհաւորական հեռագրեր հասան Ա. Ամենապատառութեան, որ մինչեւ երեկոյ Ակիւարը իր ընակարանին մէջ ընդունեց նաև շնորհաւորութեան եկող եկեղեցականներ և աշխարհականներ:

Ամեն, Եղմիրեան Ա. Պատրիարք՝ առանձին տեսակցութեան մ'առթիւ, ուր Ա. Ամենապատառութեան դիտել արուերէ թէ Հայրապետական թափուր Աթոռն ալ երեն կ'ոպասէ, հետեւալ կերպով պատասխաններ է.

«—Տարու ան մը ժամանակամիջոցը շատ քիչ կ'տեսնամ ես, Պոլոսյ Պատրիարքութեան շուրջ գեղուած կնճիռները մոքրելու համար: Ընդհանուր սկզբունքով համամիտ չեմ զործին զիկը տարին անգամ մը տարբեր ձեռքերու յանձնելուն, զործ մը, բարենորոգում մը հիմնական և մնայուն ըլլալու համար, անհրաժեշտ է որ անոր զործադիրը բաւական երկար ժամանակի համար փարի անոր ու ըսլոր մտադրած ծրագիրը գլուխ հանէ: Հետեւարար, Ազգն երբ Պատրիարքութեան պաշտօնն ինձ յանձնեց, կրնայ Կաթողիկոսութիւնն ալ իմ արժանաւոր եղբայրներէս մէկուն, զոր օրինակ Գուրեան Սրբազանին յանձնել, որ կրնայ միուլի գոհացնել Հայրապետական Աթոռին ամբազջ պահանջները:»